# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

«ՄԻՌՌՈՌՍ» ՍՊԸ-ն ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-25/3-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | |
|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 50 | զրահաբաճկոն | զրահաբաճկոն | Մարտաբաճկոն՝ համալրումներով ՀՆՉ (Մարտաբաճկոն՝ տակտիկական գոտիով և պատյաններով) Մարտաբաճկոնը կազմված է դիմային, թիկունքային և երկու կողային հատվածներից, որոնք ունեն արագ անջատման, արձակման (մոլլե) համակարգեր: Դիմյին և թիկունքային մասերը ուսերի վրա միմյանց ամրանում են կախաններով , որոնք , նույնպես, դիմացից ունեն արագ անջատման համակարգեր: Մարտաբաճկոնը բոլոր հատվածներում ՝ դիմային, թիկունքային, կողային, ունի արտակարված մոլլե համակարգի ամրագոտիներ: Դիմային և թիկունքային հատվածները բազմաշերտ են, ունեն սպունգային բարձիկներ, ցանցային օդափոխման շերտեր, ինքնակպչուն ժապավեններով հատվածներ, ներսի մասում ունեն զրահե վահանների տեղադրման համար նախատեսված գրպաններ, որոնք կոճկվում են (ամրանում են) նվազագույնը 4 սմ լայնքով, բարձր որակի ինքնակպչուններով: Կարերը ամուր են, ամրակարերը զիգզագաձև են: Պատրաստված է 1000 դեն նեյլոնե և/կամ 100% պոլիէսթեր նյութերից, նեյլոնե ժապավենից և պարաններից, |

| | | | |
|---|---|---|---|
| | | | հիմնական կարի համար օգտագործված թելի ամրության ինդեքսը` 1400 N , ներքին կարերի համար օգտագործված թելի ամրության ինդեքսը` 1000 N : ՈՒՆի զույգով կրծքամասի և գոտկատեղերի արագ ամրացման-արձակման պոլիմեռային ճարմանդներ` նեյլոնե կախաններով, որոնք ամուր են, թույլ ճկվող, դժվար կոտրվող: Մարտաբաճկոնի քաշը` առանց ամրացվող պատյանների 2.9-3.6 կգ, դիմային և հետին վահանիկների լայնքը` 30-34սմ, բարձրությունը` 37-42 սմ: Դիմային և կողային հատվածները ունեն 9 հատ AK-74 ինքնաձիգի պահեստատուփերի համար նախատեսված գրպանիկներ, որոնցից 3-4 հատը` դիմային մասում, ունեն պահեստատուփերի ամուր ֆիքսման համակարգեր: Մարտաբաճկոնին ամրացվում են պատյաններ` 1 հատ` գոյատևման լրակազմի համար (12*16*7 սմ), 1 հատ առաջին բուժօգնության պայուսակի (10*15*6 սմ), և 1 հատ ռադիոկայանի տեղադրման (5*10*4 սմ): Մարտաբաճկոնին ամրացված է նաև, 2 հատ 1 տեղանոց նռնակի պատյաններ, 1 հատ դատարկ պահեստատուփերի ծալովի պատյան, 1 հատ ՛՛Գլոկ 19՛՛ ատրճանակի կոճկվող և մոլլե համակարգին ամրացվող պատյան, 1 հատ ատրճանակի պահեստատուփի պատյան, 1 հատ ժգուտային համակարգ (տուրնիկետ), և 2 հատ ինքնակպչուն ժապավենով ամրացվող ասեղնագործված կամ պոլուռետանային 6սմ* 10սմ չափսի տարբերանշան ( գույները, ձևը, չափսերը և գրվածքները Մատակարարին կտրամադրվեն պայմանագրի կնքումից հետո` անմիջապես): Տակտիկական գոտին երկշերտ է, կազմված է ներքին` ինքնակպչունով վրակարված ազատ ծայրերով գոտիից և արտաքին գոտիից , որի ծայրերին մետաղական կարգավորվող, ամուր ճարմանդներ են և ներսի մասից ինքնակպչուն ժապավեն: Արտաքին գոտու երեսին ամրակարված է երկշերտ մոլլէ (տակտիկական ամրացման) համակարգ: Մարտաբաճկոնի արտաքին տեսքը, ձևը, ձևվածքը ըստ Պատվիրատուի կողմից ներկայացվող նմուշի: Մարտաբաճկոնի, տակտիկական գոտիի և պատյանների գունավորումը` մուլտիկամ (MC): 70 հատի կոնքի չափսերի փոփոխման հնարավորությունը` 75սմ-125սմ (միաչափս` ունիվերսալ) , 35 |

| | | | |
|---|---|---|---|
| | | | հատինը` 90սմ-140 սմ : Պատյանների և աքսեսուարների չափերի թույլատրելի շեղումը` 10%:Համարժեքության սկզբունքով փոխարինումը այլ չափերի և ձևվածքի թույլատրվում է միայն Պատվիրատույի համաձայնությամբ: Փաթեթավորումը և պիտակավորումը գործարանային, ստվարաթղթե արկղերով: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

МИРРОРС ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-25/3-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | |
|---|---|---|---|
| | фирменное наименование | наименование производителя | технические характеристики |
| 50 | | | |